ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Անգլերեն

ԹԵՄԱ -Խաղերի և ժամանակակից մեթոդների կիրառումը օտար լեզվի դասերին

Կազմեց՝ Մարինա Գայամյան Ալեքսանդրի

(անուն, ազգանուն, հայրանուն)

<<Կապանի թիվ 11 միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ

(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ Թագուհի Ղոնյան

<<Կապանի թիվ N 2 ավագ դպրոց >> ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն…….3-4

ԳԼՈՒԽ 1.Խաղերի կիրառումը օտար լեզվի դասերին…….. 5-10

ԳԼՈՒԽ 2. Ժամանակակից մեթոդների կիրառումը օտար լեզվի դասերին…….11-16

ԳԼՈՒԽ 3.Սեփական հետազոտություն……17-18

Հավելված……..19-20

Եզրակացություն……21

Օգտագործված գրականության ցանկ……...22

<<Երեխայի համար խաղը խաղ չէ,այլ իրականություն>>:/Ուշինսկի/
<<Առանց խաղի չկա և չի կարող լինել լիարժեք մտավոր զարգացում: Խաղը մեծ, լուսավոր պատուհան է, որի միջով երեխայի հոգևոր աշխարհ է թափանցում հասկացությունների և պատկերացումների տարափ >>:/Սուխոմլինսկի/

Ներածություն

Դպրոցում ուսուցչի աշխատանքի և աշակերտների ուսումնական հաջողությունների արդյունքները չափվում են ձեռք բերված գիտելիքներով, կարողություններով ու հմտություններով:Աշակերտի համար առաջատար գործունեությունը նրա ուսումն է:Սակայն այն աշակերտը, որը դեռ ոչ վաղ անցյալում տարված էր զվարթ խաղերով,չի կարող զերծ մնալ դրանցից:Երբ ուսուցումը համալրվում է խաղերով և այլ արդյունավետ մեթոդներով,ապա այն դառնում է հետաքրքրիր,սրտամոտ և ցանկալի:Խաղերի և ժամանակակից մեթոդների կիրառումը շատ կարևոր է օտար լեզվի ուսուցման ընթացքում բանավոր խոսքի զարգացմանը: Ուսուցողական խաղերը նպաստում են ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը: Դասը դառնում է հետաքրքրաշարժ: Խաղի ժամանակ աշակերտները ցուցաբերում են ուժ,խելք, ճարպկություն, հնարամտություն, գիտելիքների պաշար,կարողանում են կռահել, խորամանկել:Խաղային վարժությունների ու հարցերի միջոցով լեզվական գիտելիքները դառնում են կարողություններ և միաժամանակ զարգանում է աշակերտի տրամաբանական մտածողությունն ու ստեղծագործական կարողությունները: Խաղի ուսուցողական,դաստիարակչական և զարգացնող գործառույթների հաշվառումը կանխում է ուսունական գործընթացում դրա կիրառման ժամանակ թույլ չտրվող սխալները: Այսօր ժամանակակից մանկավարժության մեջ շատ արդիական է դարձել տեղեկատվական տեխնոլոգիայի գործածումը դասաժամերին: Աշակերտի համար շատ կարևոր է ուսուցչի կողմից իրեն գիտելիք մատուցելու ձևը,ինչպես նաև իր մասնակցությունը դասին: Իսկ այդ ամենին կարող է նպաստել ճիշտ և արդյունավետ մեթոդների ընտրությունը:

Թեմայի արդիականությունը-Արդի ժամանակաշրջանում, երբ կյանքն օրեցօր առաջընթաց է ապրում, դպրոցի կարևորագույն խնդիրներից են դառնում աշակերտների

ճանաչողական հետաքրքրությունների, նրանց ստեղծագործական մտածողության, ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողությունների ձևավորումն ու զարգացումը: Ճանաչողական հետաքրքրությունները զարգացնելու համար շատ կարևոր է ուսուցումը դարձնել մատչելի և հետաքրքիր,դասաժամին ապահովել ստեղծագործական մթնոլորտ: Անհրաժեշտ է գտնել ուսուցման հնարներ,որոնք հետաքրքիր են աշակերտներին և ունեն ուսուցողական, ճանաչողական նշանակություն և խթանում են աշակերտների ստեղծագործական միտքը:Այս պարագայում կարելի է առանձնացնել խաղը, որը շատ հոգեհարազատ է երեխաներին և սիրված է նրանց կողմից: Խաղերի միջոցով դասը հեշտությամբ կարելի է հասցնել արդյունավետության շեմին և հասնել դասի նպատակին: Խաղը նաև հանդիսանում է որպես աշակերտի վախի հաղթահարման միջոց, քանի որ խաղի ընթացքում ամեն ինչ հաջողվում է և աշակերտն ապրում է հուզական բավարարվածություն, իսկ հակառակ դեպքում՝ առաջանում է քննադատական վերաբերմունք և մեղքի զգացում սեփական անձի նկատմամբ: Այսպիսով, խաղի մուտքը կենդանի մանկավարժական գործընթացներ դասարանում ստեղծում է նոր և յուրահատուկ միջավայր: Այս դեպքում աշակերտները հնարավորություն ունեն ազատ արտահայտելու իրենց մտքերը և կարծիքները:

Հետազոտական աշխատանքի նպատակը:Աշխատանքի նպատակն է ներկայացնել խաղերի և ժամանակակից մեթոդների կիրառումը և արդիական լինելը օտար լեզվի դասաժամերին: Օտար լեզվի դասերին խաղային տեխնոլոգիաներ գործածելով նպաստել աշակերտների ակտիվավացմանը, լսելու և ազատ արտահայտվելու կարողությունների զարգացմանը:

Հետազոտական աշխատանքի խնդիրները : Դիտարկել սովորողների ճանաչողական կարողությունների զարգացման դերն ու անհրաժեշտությունը դպրոցում:Խաղային տեխնոլոգիաների կիրառման հմտությունների և կարողությունների, աշակերտի ստեղծագործական երևակայության, բանավոր խոսքի զարգացում, բարդույթներից ազատագրում, իրավիճակը շտկելու կարողության ձևավորում:

ԳԼՈՒԽ 1.

ԽԱՂԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԴԱՍԵՐԻՆ

Խաղը մարդուն ուղեկցել է նրա պատմական զարգացման բոլոր փուլերում:Խաղը մարդկային գործունեության ամենահետաքրքիր ձևերից մեկն է: Խաղը եղել է ու կա զվարճալի զբաղմունք և անհրաժեշտ կարողությունների ձևավորման միջոց:Խաղային գործունեության ընթացքում կարելի է ուսումնասիրել և ճանաչել մարդուն իր բոլոր կողմերով: Յուրաքանչյուր աշակերտ խաղերի ժամանակ ծագած դժվարությունները հաղթահարելու ճանապարհին դրսևորում է ինքնատիպ վարք: Նրանք հանդես են բերում ուժ,խելք, ճարպկություն, հնարամտություն, զանազան գիտելիքներ: Եթե ուսուցիչ-աշակերտ և աշակերտ-ուսուցիչ փոխհարաբերություններում մինչ օրերս կային որոշ պատնեշներ, ապա այսօր արդեն խաղի միջոցով դրանք կամաց-կամաց անհետանում են: Խաղային վարժությունների միջոցով զարգանում է աշակերտների տրամաբանական մտածողությունը: Աշակերտներին հնարավորություն է տրվում ծանոթանալու փաստերին,կարողանում են ինքնուրույն մտածել, վերլուծել և հետևություն անել: Խաղի միջոցով աշակերտները միաժամանակ և կրթվում են, և դաստիարակվում:Խաղը ցանկացած դասանյութը դարձնում է հետաքրքիր և գրավիչ:Դասարանում ստեղծվում է աշխատանքային եռանդուն տրամադրություն, հեշտանում է գիտելիքների և կարողությունների ձեռքբերման գործընթացը:Խաղի ժամանակ երեխաների համար իրականություն են դառնում իրենց ձգտումները, երևակայածն ու տպավորությունները: Մանկավարժության մեջ խաղերը չպետք է ինքնանպատակ լինեն;Խաղը պետք է հանդես գա ոչ թե որպես առանձին հնար, այլ ծառայի ուսումնական նպատակին:Անհրաժեշտ է գործածել այնպիսի մեթոդներ և տեխնոլոգիաներ,որը աշակերտի մոտ կառաջացնի հետաքրքրություն, խաղը պետք է բաղկացած լինի հարուստ տարրերով, որպեսզի աշակերտները չձանձրանան: Այդ իսկ պատճառով խաղը պետք է կիրառվի ստեղծագործաբար: Բոլոր ուսուցանող խաղերը, բազմաբնույթ հետաքրքիր առաջադրանքները աշակերտին ներգրավում են դասի ընթացքի մեջ, նրանք դառնում են ուշադիր, սկսում են լարված մտածել, դառնում են պատասխանատու:Ուսուցողական խաղը աշակերտներից պահանջում է

հնարամտություն, ուշադրություն,արագաշարժություն, համագործակցում: Այս ամենի կարևոր մասն է նաև դասի դաստիարակչական կողմը, քանի որ համագործակցության ընթացքում աշակերտները շփվում են մոտիկից, մրցակցում են իրար հետ, վիճում են, իրար օգնում են, ձեռք են բերում ինքնուրույնություն և դառնում են ավելի ընկերասեր: Խաղի ընթացքում մեծ տեղ պետք է հատկացնել հետաքրքրաշարժ առաջադրանքներին, որոնց գլխավոր նպատակը դառնում է սովորածը կրկնելու, ամրապնդելու և կիրառելու կարողությունների ձևավորումը: Նմանատիպ հետաքրքրիր առաջադրանքները աշակերտները կատարում են հեշտությամբ և մեծ սիրով: Նրանք ինքնուրույն կամ ուսուցչի օգնությամբ գտնում են, կազմում են, հորինում են, առանձնացնում են, համապատասխանեցնում են և այլն:Տվյալ ժամանակահատվածի ամբողջ ընթացքում աշակերտները կամա թե ակամա սովորում են այն ամենը, ինչը ծրագրված է կամ թաքնված այդ առաջադրանքների հետևում: Խաղերը միայն դասը հետաքրքրաշարժ, զվարճալի ու բազմերանգ դարձնելու համար չեն միայն, դրանք առաջնահերթ ուսանելի են և նոր գիտելիքներ են հաղորդում, սովորեցնում միտքը լարել, տրամաբանել: Ուսուցողական խաղերը զարգացնում են երեխայի երևակայությունը, արագորեն լուծումներ գտնելու կարողությունը, համակցված մտածողությունը: Ճիշտ կազմակերպված խաղը նպաստում է, որ աշակերտը ճանաչի երևույթի շատ կողմերը, որոնք ի հայտ են գալիս խաղային իրավիճակում: Ուսուցման մեջ զարգացնող հիմնական խնդիրներից է աշակերտի մեջ ձևավորել ակտիվ, ինքնուրույն և ստեղծագործական մտածողություն: Սակայն ակտիվ մտածողությունը կարող է չլինել ինքնուրույն:

Կան ընդհանուր պահանջներ, որոնց անհրաժեշտ է հետևել խաղեր կազմակերպելիս: Խաղը պետք է կազմակերպել, ուղղորդել, միջամտել, բայց չճնշել: յուրաքանչյուր աշակերտ պետք է հնարավորություն ունենա ցուցաբերել իր նախաձեռնությունը: խաղերի ընթացքում շատ կարևոր է ճիշտ ձևավորել խմբերը: Խմբերում պետք է ընդգրկել և ուժեղ, և թույլ աշակերտներին: Խաղերի ընթացքում մասնակիցները չպետք է իրար նվաստացնեն կամ վիրավորեն, պետք է կարողանան համագործակցել, լսել և հարգել միմյանց կարծիքները: Խաղը պետք է բխի դասի թեմայից և կազմակերպվի այնպես, թր աշակերտի մոտ առաջանա հետաքրքրություն և ցանկություն մասնակցելու, իչպես նաև

մրցելու և հաղթելու: Խաղի բովանդակությունը, կանոնները և պայմանները պետք է լինեն պարզ, հասկանալի և մատչելի: Խաղը պետք է բխի տվյալ դասի թեմայից և կազմակերպվի այնպես, որ աշակերտի մոտ առաջանա հետաքրքրություն, ինչպես նաև մրցակցություն:Առարկաներն ու նյութերը, որոնք պետք է գործածվեն խաղերը կազմակերպելու համար, պետք է լինեն անվնաս, հարմար օգտագործման համար: Երեխաները ուրախանում են, երբ սովորում և աշխատում են հաճույքով: Երբ դասարանում ստեղծվում է հարմարավետ միջավայր, աշակերտները սկսում են աշխատել ավելի վստահ և ինքնուրույն: Բնականաբար այդպիսի մթնոլորտ ստեղծելու համար շատ նպատակահարմար է խաղային մեթոդը:Խաղերը և վարժությունները միշտ պահանջում են անհատական մոտեցում: Երբեմն հնարավոր է, որ խաղի ժամանակ առաջանան որոշ դժվարություններ խմբերը կազմելիս: Ուսուցիչը պետք է կարողանա ապահովել, որ մասնակիցները գտնվեն հավասար պայմաններում: Դասի ժամանակ խաղերն անցկացվում են մեծ ու փոքր խմբերով՝ ուսուցչի ղեկավարությամբ, որոնց անցկացման նպատակն է հին նյութի և աշակերտներին հանձնարարվող նոր թեմայի ավելի արդյունավետ կերպով յուրացումը: Խմբային աշխատանքի ընթացքում խաղային մեթոդի կիրառումը, դասի թեմային համապատասխան պարագաների գործածումը թչ միայն արդյունավետ է, այլ համարվում է դասավանդման շարժիչ ուժ: Անդրադառնալով խաղերի միջոցով օտար լեզվի ուսուցմանը, պետք է ասենք, որ մեր ժամանակներում խաղը հանդես է գալիս որպես ուսուցման միջոց, որը նպաստում է դասի արդյունավետությանը: Երբ դասն անցկացվում է խաղի միջոցով, որի ժամանակ դասի թեմային համապատասխան պարագաներ են գործածվում, ուսուցիչը հանդես չի գալիս որպես դասավանդող, իսկ աշակերտն էլ այդ պարագայում չի ստանձնում միայն սովորողի դեր: Աշակերտների մոտ առաջանում է մրցակցելու և հաղթելու ցանկություն: Ուսուցիչը պետք է ճիշտ կողմնորոշվի և խաղի մեջ ընդգրկել նաև այն աշակերտներին , ովքեր ամաչկոտ են և տալ այնպիսի առաջադրանք, որ նրանց մոտ վստահություն լինի, որ նրանք իմանան, որ կարող են տվյալ առաջադրանքը կատարել: Շատ կարևոր է խաղի անցկացման համար դասարանում նախապես ստեղծել համապատասխան հարմարավետություն՝սեղանների և աթոռների դասավորվածությունը փոխել,ընտրել միանման պարագաներ: Կարևոր է նաև այն, որ ուսուցիչը ճիշտ և հասկանալի

ներկայացնի և բացատրի դասի թեման և խաղի կանոնները: Ուսուցողական խաղի անցկացման արդյունավետության համար, ուսուցիչը պետք է հանձնարարությունը տալուց հետո պարտադիր վերահսկի աշակերտներին, որպեսզի խառնաշփոթ չառաջանա և չունենա հակառակ արդյունք:
Խաղի կիրառումը ուսուցման գործընթացում հնարավորություն է ընձեռում ուսուցչի աշխատանքն առավել բազմազան ու ճկուն դարձնել: Տարրական դպրոցում արդյունավետ են անցկացվում երկխոսությունները և դերախաղերը: Միջին դպրոցում հաջողությամբ են կիրառվում խաղ-բեմականացումները: Այս դեպքերում դրսևորվում են երեխաների ստեղծագործելու և երևակայելու կարողությունները: Ստորև ներկայացվում են այն խաղերի տեսակները, որոնք առավել կիրառելի են և արդյունավետ:

Ա/Խաղ <<Պատմիր>>:Ի՞նչ ես տեսնում նկարում: Խմբավորել,նախապես տրված բառաշարքից,թե որո՞նք են հաշվելի գոյականները,որո՞նք՝ անհաշվելի: Խաղում են դասարանի բոլոր աշակերտները: Յուրաքանչյուր շարքից մեկ աշակերտ նշում է իր շարքին համապատասխան / հաշվելի կամ անհաշվելի գոյականը/: Ճիշտ և սխալ պատասխանները նշվում են, տրվում են համապատասխան միավորներ:Բ) Խաղ<<Համապատասխանեցրու հարցերը>> խաղը: Յուրաքանչյուր խմբին տրվում է քարտ, որում գրված են նախադասություններ և հարցեր: Հանձնարարվում է համապատասխանեցնել հարցը նախադասության հետ:
Արդյունավետ է նաև երեխաների օրվա ռեժիմի ներառումը խաղային իրավիճակների մեջ՝ ամփոփելով միաժամանակ թվերի իմացությունը:Կարելի է կազմակերպել <<Շաբաթվա օրերը>> խաղը <<Ընդհակառակը>> խաղի ձևով:Տարբերությունն այն է,որ այստեղ շաբաթվա օրերի անվանումները համապատասխանաբար զուգակցվում են թվերին: Օրինակ՝ the first-Monday, the fourth-Thursday և այլն:
Գ/Խաղ<< Working with pictures >> Յուրաքանչյուր խմբին տրվում է օրվա թեմային համապատասխան նկար , օրինակ՝ << Seasons and weather>> թեմայով և հանձնարարվում է կազմել բառակապակցություններ՝գոյական- ածական կաղապարով:Հաղթում է այն խումբը, որն ավելի շատ բառակապակցություն է կազմում: Բառապաշարի ուսուցման ժամանակ շատ արդիական և արդյունավետ է կազմակերպել գրավոր և բանավոր խաղեր:

Դ/Գրավոր խաղ-Գրատախտակին յուրաքանչյուր խմբի համար գրվում է 5-10 բառ, որոնցում կան բացթողնված տառեր:Յուրաքանչյուր խումբ լրացնում է իր խմբի համար նախատեսված բառաշարքի բառերի բացթողումները: Հաղթում է այն խումբը, որը ավելի շատ ճիշտ լրացրած տառեր ունի: Միաժամանակ կատարվում է նաև բանավոր խաղը,որը տվյալ խաղի շարունակությունն է: Հանձնարարվում է հեգել/spelling / տվյալ բառերը:
Ե/Խաղ-բառաքարտեզ,բառ-ոգնի/Word association/ էջի կամ գրատախտակի կենտրոնում գրում են տրված բառը, շուրջը իմաստով դրան զուգորդող իրենց իմացած բառերը:
Զ/Խաղ-բինգո/լոտո-Խմբերին տրվում են նկարներ և բառեր:Հանձնարարվում է գտնել նկարներին համապատասնող բառերը, նշել նկարների հականիշ կամ հոմանիշ բառերը:
Է/Խաղ-բառադարան:Յուրաքանչյուր խմբին տրվում է տուփ վրան տարբեր գույներով հոգնակի թվի կազմության վերջավորությունները: Աշակերտները տրված բառերը հավաքում են ըստ հոգնակիի կազմության ձևի:
Ը/Խաղ-համակցում/matching/:Աշակերտներին հանձնարարվում է համադրել տրված երկու բառաշարքերը, իրար կապակցվող բառերը, իրար համապատասխանող գոյականներն ու բայերը, գոյականներն ու ածականները, պարզ բառերը, որոնք կազմում են բարդ բառեր, բառը և համապատասխան նկարը:
Թ/Խաղ-<<Սա իմն է>>:Յուրաքանչյուր աշակերտ թվարկում է, թե ինչ ունի դի պայուսակում՝ ամրապնդելով -<<School objects>> թեման:Մասնակիցը խաղը սկսում է I have a…../ ես ունեմ/ արտահայտությամբ:

Ժ/ Խաղ -<<Դասակարգում>>-Յուրաքանչյուր խմբին հանձնարարվում է դասակարգել տրված բառերը ըստ համապատասխան թեմաների/ կենդանիներ, հագուստ, սնունդ և այլն/ Նախապես կազմված պաստառի վրա աղյուսակում գրվում են ոլորտները և ներքևի մասում խառը բառերը: Աշակերտները մոտենում են և հերթով մեկական բառ լրացնում համապատասխան աղյուսակում: Հաղթում է այն խումբը, որն ավելի շատ ճիշտ գրածմ բառեր ունի: Եթե խմբերը

հավասարապես են միավորներ հավաքել, ապա ավելացնում են ևս մի քանի գոյական:

clothes	food	animals	drinks

tea, sandwich, parrot, jacket, coat, milk, horse, soup,sausage, lemonade, scarf, rabbit.

Այս խաղի արդյունավետությունը կայանում է նրանում, որ աշակերտները մեծ ոգևորվածությամբ են խաղում և միաժամանակ ամփոփվում են մի քանի թեմաներ: Իհարկե այս խաղը կարելի է կազմակերպել նաև ընդգրկելով այլ բնագավառներ:

country	language	capital

England, London, Armenia, French, Italian, India, Egypt and so on.

ԳԼՈՒԽ 2.

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԴԱՍԵՐԻՆ

Դասը ուսումնադաստիարակչական գործընթացի՝ որոշակի շրջանակներում ամփոփված իմաստային, ժամանակային և կազմակերպական տեսանկյունից տրամաբանորեն ավարտուն, ամբողջական հատվածն է, որի ընթացքում ուսուցիչը նպատակաուղղում և պլանավորված կառավարում է սովորողների մտավոր ընդունակությունների զարգացումը,ջեռք բերած գիտելիքների գործնականում կիրառումը:Դասի ընթացքում մանկավարժը պետք է օգտագործի աշխատանքի բազմազան ձևեր և ժամանակակից մեթոդներ, որոնք կնպաստեն դասի արդյունավետությանը:Դասի արդյունավետությունը թույլ է տալիս լուծել նաև դաստիարակչական խնդիրները մանկավարժական գործունեության բովանդակության և մեթոդների միջոցով: Ժամանակակից տեղեկատվական աշխարհում ուսումնական գործընթացի տարածաժամանակային հնարավորությունները սահմանափակ են, դրա համար ուսուցիչը պետք է ընտրի դասի այնպիսի մեթոդներ, որոնք համապատասխան են արդի պահանջներին և ուսումնական գործընթացի դիդակտիկական նպատակներին: Ուսուցման արդյունավետ կազմակերպման խնդիրներից մեկն այն է, որ ուսումնական գործընթացին մասնակցեն դասարանի բոլոր աշակերտները:Աշակերտի համար շատ կարևոր է ուսուցչի կողմից իրեն գիտելիք մատուցելու ձևը,ինչպես նաև իր մասնակցությունը դասին: Իսկ այդ ամենին կարող է նպաստել ճիշտ և արդյունավետ մեթոդների ընտրությունը:

Այսօր ժամանակակից մանկավարժության մեջ շատ արդիական է դարձել տեղեկատվական տեխնոլոգիայի գործածումը դասաժամերին:Տարիներ շարունակ դպրոցում գործածել են տպագիր նյութեր,կավիճներ,ավանդական գրատախտակ: իսկ հիմա համակարգչային և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների զարգացման արդյունքում հնարավոր է ուսուցումը կազմակերպել ավելի հետաքրքիր և արդյունավետ,ինչպես նաև օգտագործել էլեկտրոնային գրատախտակ: Համակարգչային տեխնոլոգիաները նպաստում են ուսումնական գործընթացում իրականացվող գործողությունների հեշտացմանը և հետաքրքիր լինելուն:Համակարգչով դասապրոցեսն

իրականացնելը հատկապես նպատակահարմար է հայոց լեզվի, գրականության, օտար լեզուների դասաժամերին: Որպես անգլերենի ուսուցիչ կարող եմ նշել,որ անգլերենի դասաժամերին սովորողի համար ավելի հեշտ է դառնում կազմակերպել բառարանային աշխատանքները կամ կատարել թարգմանությունները,իսկ հայոց լեզվի կամ գրականության դասաժամերն անցկացվում են ցուցադրվող, տեսալսողական կամ թվայնացված այլ նյութերի կիրառմամբ: Դասի համար ցանկացած մեթոդ ընտրելիս մանկավարժը պետք է հաշվի առնի, որ դասարանում սովորողներն ունեն գիտելիքների տարբեր մակարդակներ, հետաքրքրություններ, ընկալման և ըմբռնման տարբեր մակարդակներ:Ժամանակակից մանկավարժության մեջ ուսուցման արդյունավետության համար անհրաժեշտ է ուսուցման գործընթացում աշակերտների այնպիսի հմտության ձևավորում, որը կօժանդակի ուսուցման միջոցների ճիշտ օգտագործմանը և ճիշտ պատկերացում այն մասին, թե ինչպիսի արդյունք ենք ցանկանում ստանալ:Ուսուցման գործընթացում հարմար և արդյունավետ մեթոդներից է համագործակցային մեթոդը:Այս մեթոդի արդյունքում աշակերտները սովորեցնում են միմյանց,զարգանում է նրանց բանավոր խոսքը, ակտիվանում է նրանց մտածողությունը և մեծ հետաքրքրություն է առաջանում դասի հանդեպ: Ես շատ եմ գործածում համագործակցային մեթոդը հատկապես 3-րդ դասարանում հիմնականում երկխոսության տեսքով և նկատելի է, որ աշակերտների մոտ մեծ ակտիվություն և մրցակցություն է առաջանում,թե որ թիմը ճիշտ կամ ավելի արագ կպատասխանի: Ես նպատակահարմար եմ գտնում անգլերենի դասաժամերին գործածել համագործակցային և խմբային աշխատանքի մեթոդները, քանի որ դասարաններում քիչ աշակերտներ են սովորում և արդյունավետ աշխատանքի արդյունքն ակնհատ է դառնում: Փորձը ցույց է տվել, որ հատկապես տարրական դասարաններում է նպատակահարմար ուսուցումը կազմակերպել խաղային և մրցակցային իրավիճակներ ստեղծելու միջոցով: Իհարկե ոչ բոլոր թեմաներն են նման հնարավորություն ընձեռում, սակայն իմ փորձից ելնելով, համոզվել եմ, որ այս մեթոդն արդյունավետ է դերանուններ, մասնագիտություններ, տարվա եղանակներ, թեմաների դեպքում:Իմ կարծիքով այս մեթոդները կարելի է նաև կիրառել ռուսաց լեզվի,ինչպես նաև մաթեմատիկայի դասերին: Ցանկացած մաթեմատիկական բարդ ապացույցն անգամ կարելի է

ուսուցանել խաղային իրավիճակներով՝ նախապես օգտագործվելիք հանրահաշվական օրենքները սահմանելով որպես խաղի կանոններ: Ամեն մի երեխայի հարազատ է խաղը, նա սիրով է մասնակցում խաղային իրադրությունում առաջադրված հարցին: Անգամ խաղ բառը լսելով նրանց մոտ առաջանում է հոգեբանական ակտիվ մի այնպիսի իրավիճակ, որն ուղեկցվում է դրական հույզերով: Հաճախ չեն բավարարում համապատասխան միջոցներ խմբային աշխատանքը էլ ավելի հետաքրքիր կազմակերպելու համար և նման դեպքում ստիպված ենք լինում մանկավարժական հմտությամբ, նոր բազմաթիվ մեթոդների ստեղծագործաբար կիռարման շնորհիվ դասապրոցեսում հասնել սովորողների ակտիվության բարձրացմանը: Շատ կարևոր է ճիշտ հոգեբանական միջավայր ստեղծել դասարանում, երբ ոչ մեկը մյուսի ասած թեկուզ սխալ մտքի վրա չի զարմանում, չի ծաղրում, քննարկվում են նույնիսկ սխալ պատասխանները: Ես ինքս դասաժամերին աշխատում եմ սովորողների հնչեցրած թեկուզև անհեթեթ կամ սխալ միտքը վերլուծելիս չճնշել նրա արտահայտվելու ցանկությունը, հաճախակի եմ օգտագործում ուշադիր չես եղել, փորձիր ևս մեկ անգամ ուսումնասիրել նյութը կամ կարդալ դասը, միտքդ հետաքրքիր ես ձևակերպել, սակայն դասին համապատասխանում է մասնակի: Խմբային աշխատանքը շատ հարմար մեթոդ է, որովհետև թույլ և դժվար ըմբռնող աշակերտի խմբում ընդգրկվում է ուժեղ կարողություններ ունեցող աշակերտ և նրանց համագործակցության արդյունքում աշխատանքն արդյունավետ է ստացվում, քանի որ ուժեղ աշակերտի օգնությամբ թույլ աշակերտը կարողանում է որոշակի աշխատանք ներկայացնել:Անգլերենի դասաժամերին տեքստը ներկայացնելուց հետո ես աշակերտներին բաժանում եմ երկու խմբի տալիս եմ մեկ կամ երկու փոքրիկ տեքստ և հանձնարարում եմ, որ գտնեն այն տեքստը, որն իր բովանդակությամբ լիովին համապատասխանում է դասագրքի դասին: Նրանք խմբով ընթերցում և քննարկում են՝ գտնելով ճիշտ տեքստը:Այս մեթոդը նպաստում է դասի լավ յուրացմանը և զարգացնում է համեմատելու, վերլուծելու կարողությունները: Ժամանակակից մանկավարժության մեջ արդյունավետ են համարվում նաև խոսքային մեթոդները՝ պատմելը, դասախոսությունը, զրույցը,բանավեճը,ինչպես նաև բացատրական-ցուցադրական մեթոդը: **«Պատմել»** - այս մեթոդը կիրառվում է ուսուցման բոլոր փուլերում: Պատմելը սկսվում է ներածությունով

և ավարտվում ամփոփումով: Շարադրվում կամ պատմվում է ուսումնական նյութի բովանդակությունը՝ խստագույնս պահպանելով սիստեմատիկության և հաջորդականության սկզբունքը: Պատմելու ընթացքում վարպետորեն առանձնացվում են նյութի գլխավոր տարրերը: **«Դասախոսություն»** - մեթոդը կիրառվում է ծավալուն, բարդ ուսումնական նյութերը քննելիս:եթե Այս մեթոդը ենթադրում է դասախոսության պլանի հստակորեն կազմում, հարցերի տրամաբանական կապերի պահպանում, դիտազննական պարագաների, ուսուցման տեխնիկական միջոցների ճիշտ ընտրություն և այլն:Դասախոսությունը հարմար է հատկապես քերականական նյութեր տրամադրելիս: **«Զրույց»** - մեթոդի էությունն այն է, որ աշակերտները պատասխանում են նախօրոք կազմված հարցերին: Այս մեթոդը կիրառվում է նոր նյութի հաղորդման, ամրապնդման, ստուգման ժամանակ: Նոր դասանյութի ավելի արդյունավետ անցկացման համար աշակերտներին նախապես հանձնարարվում է ուսումնասիրել նյութը, որը վերլուծվելու է և բացատրվելու: Զրույցի մեթոդի հիմնական գործառնությունը մոտիվացիան է: **«Բանավեճ»** –մեթոդը կիրառվում է աշակերտների իմացական հետաքրքրությունները ակտիվացնելու, կարծիքները, համոզմունքները, տեսակետները հայտնելու, հարցապնդումներ անելու, ճշմարտությունն ի հայտ բերելու համար: Բանավեճի միջոցով արժևորվում, գնահատվում են սովորողների գիտելիքները,կարողություններն ու հմտությունների չափը, ծավալը, զարգացման աստիճանը: Առանց կայուն և խորը գիտելիքների դժվար է ակտիվորեն մասնակցել բանավեճին, համոզել ընդդիմախոսներին: Բանավեճը սովորողներից պահանջում է ճիշտ ձևակերպել իրենց մտքերը, համբերատար լսել ընկերների պատասխանները, կարծիքները, հարցապնդումները, հակադրվելու դեպքում բացառել վիրավորանքը: Բանավեճը կարող է լինել ազատ, երբ այն զարգանում է ազատ, և ղեկավարվող, երբ այն զարգանում է որոշակի ուղղությամբ: Բացատրական-ցուցադրական մեթոդ- **«Բացատրական-ցուցադրական»** մեթոդի էությունն այն է, որ դասավանդողը սովորողներին հաղորդում է պատրաստի գիտելիքներ, իսկ սովորողները այդ գիտելիքները ամրակայում են իրենց հիշողության մեջ՝ հենվելով դիդակտիկ նյութերի վրա: Այս մեթոդի առավելությունը ժամանակի տնտեսման մեջ է: Իհարկե կլինեն նաև թերություններ, որոնք առաջ են գալիս նոր մեթոդների, հնարների կիրառման

ժամանակ, սակայն աշակերտակենտրոն ուսուցումը ժամանակակից պահանջներին համապատասխանող այնպիսի առավելություններ ունի, որ պետք է անպայման ստեղծագործող լինել, զբաղվել ինքնակրթությամբ և աշխատել նոր մոտեցումներով:Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ավանդական ուսուցման մեջ լավագույնը անհրաժեշտ է արդիականացնել նոր, ժամանակակից մոտեցումներով, ուսուցման մեթոդներով և ժամանակակից տեխնոլոգիաներ օգտագործելով՝բարելավել ուսուցման արդյունավետությունը: Հարցում-**«Հարցում (անգլ.՝ debriefing)»** տերմինը վերաբերում է խոսակցական ձևին, որը կոնկրետ իրադարձությունից հետո վերածվում է տեղեկատվության փոխանակման և ուսումնասիրության:Իրավիճակից կախված հարցումը կարող է տարբեր նպատակներ ունենալ: Այն հաշվի է առնում փորձը և հեշտացնում է թեմային անդրադարձ կատարելը: Հարցումը երբեմն կարող է ստուգել աշակերտներին սակայն դա մտադրություն չէ: Հարցման նպատակն է աշակերտներին թույլ տալ եզրակացություններ կատարել իրենց փորձի վերաբերյալ ու առաջընթաց կատարել փոփոխության և փոխակերպման միջոցով ինչպես նաև, օգնել նրանց օգտագործել իրենց փորձը: **Դասավանդման մեթոդ-** ներառում է ուսուցիչների կողմից օգտագործվող սկզբունքները և մեթոդները՝ խթանելու աշակերտների ուսուցման գործընթացը: Այս ռազմավարությունները կախված են մասամբ թեմայի բովանդակությունից և մասամբ սովորողի բնույթից: Որպեսզի տվյալ մեթոդը լինի համապատասխան և արդյունավետ՝ այն պետք է առնչվի սովորողի առանձնահատկությունների և ուսուցման նյութի հետ: Մեթոդների ընտրության առաջարկները բազմաթիվ են և դրանց ընտրությունը կատարելիս ոչ միայն պետք է հաշվի առնել առարկայի բնույթը, այլ նաև թե ինչպես են սովորում աշակերտները:**Գուշակություն-** Սովորողների հետաքրքրությունը խթանելու նպատակով կարելի է նյութի հիմնական կարևոր հասկացությունները կամ վերնագիրը թերթիկների վրա գրել, կտրատել առանձին բառերի և պահել դասասենյակում՝ աչքից հեռու տեղերում: Դասը սկսելուց առաջ առաջարկել սովորողներին գտնել դրանք և համադրելով ստանալ վերնագիրը կամ գլխավոր միտքը: Կարելի է առաջարկել նաև ստացածը կարդալով գուշակել՝ ինչի մասին է դասը, կարծիքները լսել և առաջարկել ուսումնասիրել բուն դասանյութն ու ընդհանրություններ կամ տարբերություններ գտնել գուշակածի ու դասանյութի միջև: Կարելի է նաև մտածողության հմտություններ զարգացնելով իրականացնել այս հնարը: Օրինակ՝ կարող

եք առանձին թղթերի վրա գրել «մարտ», «անտառ», «սունկ», «անձրև» բառերը և աշակերտներին առաջարկել գտնել այն հասկացությունը, որը միավորում է այս բառերը։Ուսուցիչն առաջարկում է թղթի վրա գրել ամենասիրած ֆիլմի կամ հեքիաթի անունը և մտապահել։ Այնուհետև ուսուցիչը թղթերը հավաքում է և խառը բաժանում աշակերտներին։ Աշակերտները փորձում են գուշակել, թե ով է գրածի հեղինակը:**Գիտեմ, ուզում եմ իմանալ, սովորեցի-** (ԳՈՒՍ)։ Դասը սկսելու շատ հայտնի հնար է նաև ԳՈՒՍ-ը։ Դասասկզբում ուսուցիչը գծում է Մ-աձև աղյուսակ, որի ձախ սյունակում գրում է՝ գիտեմ/know/, կենտրոնում՝ ուզում եմ իմանա/want to know/լ, աջ սյունակում՝ սովորեցի/learnt/ բառերը։ Դասի թեման հայտնելուց հետո ուսուցիչը դիմում է աշակերտներին հետևյալ հարցով. ի՞նչ գիտեք այս թեմայի, հասկացության մասին։ Ապա լրացվում է գիտեմ սյունակը։ Հաջորդիվ աշակերտներին հարցնում է՝ ի՞նչ եք ուզում իմանալ այդ թեմայի մասին։ Եվ լրացնում է ուզում եմ իմանալ սյունակը։ Դասի վերջում լրացվում է սովորեցի սյունակը։

I know	I want to know	I learnt

ԳԼՈՒԽ 3.

Սեփական հետազոտություն

Նոր չափորոշչային պահանջների ներդրման պայմաններում ուսուցչի խնդիրն է ապահովել աշակերտների ուսումնական գործունեության արդյունավետ կազմակերպումը, որի ընթացքում կապահովվի աշակերտների ընդունակությունների, ստեղծագործականության, անհատականության զարգացման բարձր մակարդակ: Հետազոտության նպատակն է եղել ստուգել խաղային տեխնոլոգիաներիի կիրառումը անգլերենի դասաժամերին: Ես փորձարարական հետազոտությունն իրականացրել եմ բացահայտելու խաղի դերը ուսուցման գործընթացի արդյունավետության ապահովման գործում: Աշխատանքի նկարագրությունը. Աշխատանքը իրականացրել եմ խմբային ձևով, որը նպաստեց նյութի հեշտ յուրացմանը, երեխաները մեծ ոգևորությամբ դարձան խաղի մասնակիցներ և գիտելիքների ձեռքբերման գործընթացը դարձավ ավելի դյուրին և մատչելի: Դասերը հետաքրքիր էին բոլոր դասարանների աշակերտների համար: Ստորև ներկայացնեմ մի քանի օրինակներ:

1.3-րդ դասարանում նախաայբբենական շրջան է և աշակերտների մոտ զարգացնում եմ բանավոր խոսքը:Տվյալ դասարանում խաղը կազմակերպել եմ՝ համակարգելու աշակերտների ձեռք բերած գիտելիքները << School objects>> and << Colours>> /գրենական պիտույքներ և գույներ թեմաներից/:Դասարանը բաղկացած է ութ աշակերտից, բաժանել եմ երկու խմբի:Յուրաքանչյուր խմբին տրվել են գունավոր մատիտներ, կպչուն թղթեր և գրենական պիտույքներ: Խմբերին հանձնարարել եմ բառակապակցության տեսքով համադրել գույնը գրենական պիտույքի հետ:

2.Խաղային տեխնոլոգիա եմ կիրառել նաև 4-րդ դասարանում:Դասի նպատակն էր ընդլայնել աշակերտների բառապաշարը << Your house>> /քո տունը/ թեմայից:Քանի որ դասարանը բաղկացած է տասնչորս աշակերտից, այն բաժանել եմ երեք խմբերի:Բոլոր խմբերին տվել եմ նկարներ, որոնցում պատկերված են տան պարագաներ՝բազմոց, բազկաթոռ, աթոռ, պահարան և այլն: Յուրաքանչյուր խմբին հանձնարարել եմ առանձնացնել ննջասենյակում, մյուսին՝հյուրասենյակում, երրորդին՝ ճաշասենյակում գտնվող համապատասխան իրերը: Աշակերտների միջև սկսվեց մրցակցություն և

հետաքրքրություն առաջացավ դեպի հաղթանակը:
Նշեմ, որ հետազոտության ընթացքում նկատել եմ, որ հատկապես տարրական դասարանների աշակերտները դասապրոցեսին կիրառած խաղերի ընթացքում ավելի հաճույքով են մասնակցում դասին և դրանց միջոցով ձեռք են բերում նոր հմտություններ, կարողություններ ու գիտելիքներ, նրանց մոտ առաջանում է պատասխանատվության զգացում և գիտակցում են իրենց դերը խմբի աշխատանքում:
3.Հաջորդ խաղային տեխնոլոգիան կիրառել եմ 9-րդ դասարանում: Դասարանը բաժանել եմ երկու խմբի: Դասի թեման էր << More facts about the USA>>:Յուրաքանչյուր խմբին տվել եմ թուղթ, որի կենտրոնում գրված էր <<USA>> և բառաքարտեզ/բառ-ոզնի խաղի միջոցով փորձել եմ ամփոփել նրանց գիտելիքները Ամերիկայի վերաբերյալ: Աշակերտներին հանձնարարվել էր գրել բոլոր այն բառերը, որոնք իմաստով զուգորդվում են ԱՄՆ-ի հետ:Հաղթեց այն խումբը,որը ավելի շատ բառեր էր հավաքագրել:
4.Հետազոտության ընթացքում հասկացա, որ ավագ դպրոցի աշակերտներին այդքան էլ չի գրավում խաղը: 10-12-րդ դասարաններում ավելի արդիական է հարց ու պատասխանը, պատմելը, քննարկելը, բանավեճը: Աշակերտները, գտնվելով դեռահասության տարիքում կարիք ունեն զրուցելու, հարցնելու, խորհրդակցելու, բացի դրանից, բանավոր խոսքի զարգացման համար նպատակահարմար եմ գտնում ավելի շատ հաղորդակցվելու մեթոդը, որը նաև արդյունավետ է:

Հավելված

USA
Republican Party
California
Philadelphia
New York
Chicago
Boston


In the dining-room
a table
a chair
a cupboard
a clock
In the bedroom
a wardrobe
a bed
a bookcase
a mirror


AGAIN ABOUT YOUR HOUSE
Look at the pictures and remember the words.
roof
wall
door
window
ceiling
floor


In the living-room
an armchair
a sofa
a TV-set
a piano

Եզրակացություն

Տվյալ հետազոտական աշխատանքի ուսումնասիրության ընթացքում եկել եմ այն եզրակացության, որ խաղը ուսուցման շատ հարմար մեթոդ է դասապրոցեսում: Այն մեծ նշանակություն ունի տարբեր տարիքի աշակերտների համար:Ուսումնասիրության ընթացքում նկատել եմ, թե ինչպես են աշակերտներն ակտիվանում, կարողանում են ազատ արտահայտել սեփական կարծիքներն ու մտքերը: Խաղերի միջոցով ընդլայնվում են աշակերտների ճանաչողական հետաքրքրությունները, ստեղծագործական մտածողությունը,զարգանում է նրանց բանավոր և գրավոր խոսքը: Խաղերի օգնությամբ ուսուցիչն ունենում է արդյունավետ բովանդակալից դասապրոցես: Խաղային վարժությունների և հարցերի միջոցով լեզվական գիտելիքները դառնում են կարողություններ և միաժամանակ զարգանում է աշակերտների տրամաբանական մտածողությունն ու ստեղծագործական կարողությունները: Խաղը հանդիսանում է նաև երեխայի վախի հաղթահարման միջոց: Խաղերի կիրառումը դասապրոցեսում հնարավորություն է ընձեռնում տարբեր կարողություններ ունեցող՝ թույլ, միջին, ուժեղ, ԿԱՊԿՈՒ աշակերտներին մասնակից դարձնել դասին և ձերբազատել կաշկանդվածությունից, առաջացնում է նրանց մոտ վստահություն, քաջություն իրենց ուժերի նկատմամբ: Ես նաև նկատել եմ, որ խաղը ցանկացած դասանյութի յուրացումը դարձնում է հետաքրքրաշարժ ու գրավիչԽաղերը մեծ դեր են կատարում նաև որպես անբարենպաստ միջավայրի ազդեցությունները կանխող և դրանց հետևանքները շտկող, հոգեկան ու մտավոր խնդիրներ ունեցող երեխաներին հասարակության մեջ ներառող միջոց:

Օգտագործված գրականության ցանկ

1.http:// library.fes.de/

2.http:// https://fondesco.ru/

3.http://multiurok.ru/

4.Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ <<Անգլերեն լեզու >>/2007 թ./

5.Նախաշավիղ 3.2010

6.Նախաշավիղ 6.2017